



ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ

ԱՐՄԵՆ ԱՅՎԱԶՅԱՆ

ԱԶԳԱՅԻՆ ԼԵԶՎԻ ՊԱՇՏԱՄՈՒՆՔԸ ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ,

ԱՆԳԼԻԱԿԱՆ, ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՈՒ ՌՈՒՍԱԿԱՆ

ԱԶԳԱՅՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՆԱՎՈՐՄԱՆ

ԺԱՄԱՆԱԿԸ

(համեմատական քննություն)*

Այս ուսումնասիրությունը համեմատական քննության է ենթարկում հայկական, անգլիական, ֆրանսիական և ռուսական սկզբնաղբյուրների պարունակած տվյալները՝ պարզելու համար այն հանգամանքներն ու ժամանակը, երբ մայրենի լեզուն դառնում է համագգային սիրո և պաշտամունքի առարկա:

Հայոց լեզուն եղել է հայերի ազգային ինքնագիտակցության զարգացման, թերևս, ամենաառաջին խթանը: Հնում հայերենի, իբրև մայրենի լեզվի, գործածությամբ է պայմանավորվել անհատի պատկանելությունը հայ էթնոսին:

Լեզվի և ազգային ինքնագիտակցության սերտ կապն արժանացել է արտասահմանյան և նախկին խորհրդային ազգաբանների (էթնոլոգների), սոցիոլոգների և հոգեբանների բազմակողմանի ուշադրությանը¹: Մեզանում նույնատիպ ուսումնասիրությունները, ցավոք, դեռևս բացակայում են: Այնինչ՝ հայոց լեզուն հայերի ազգային ինքնագիտակցության ձևավորման վրա

* Սույն հոդվածը քաղված է մեր՝ «Հայկական ինքնության և ազգայնականության կազմավորումը» մենագրությունից, որն այժմ գտնվում է ամփոփման փուլում:

¹ Տե՛ս, օրինակ, Adrian Hastings. *The Construction of Nationhood: Ethnicity, Religion and Nationalism* (Cambridge: Cambridge University Press, 1997), pp. 19-22, 31, 77, 108, 148, 151-152; Cheine Anwar. *The Arabic Language: Its Role in History* (Minneapolis: University of Minnesota Press, 1969); Ю. В. Бромлей. *Очерки теории этноса* (Москва: "Наука", 1983), с. 110-117, 241-243, 327-332; С. А. Арутюнян. "Этнические процессы и язык", -- *Расы и народы* (Ежегодник) No. 15 (1985), Москва: "Наука", 1986, с. 30-56.

Հայոց լեզվի առաջանալը Հայկական լեոնաշխարհում փաստված է նոր և նորագույն բազմաթիվ ուսումնասիրություններով²: Հույն աշխարհագրագետ-պատմագիր Ստրաբոնը (մ.թ.ա. 64/63 - մ.թ. 23/24) տրամադրել է պատմական Հայաստանի ամբողջ տարածքում հայոց լեզվի գերիշխանությունը վկայող մի ուղղակի տեղեկություն, ըստ որի՝ մ.թ.ա. 2-1-րդ դարերում Հայաստանի բնակչությունն ամբողջովին հայախոս է եղել՝ «ուստի և բոլորը միալեզու են»³: Սակայն, Հայկական լեոնաշխարհի լեզվական հայացումը ավարտված է եղել ոչ թե Ստրաբոնի գրանցած ժամանակներում, այլ շատ ավելի վաղ՝ առնվազն մ.թ.ա. 7-6-րդ դարերում⁴:

Ակնհայտ է նաև հայոց լեզվի ազդեցությունը հայերի՝ հայրենասիրական-ազգայնական մտայնության և գաղափարախոսության զարգացման վրա: Խորենացու մեկ այլ արժեքավոր հաղորդում ցույց է տալիս, թե որքան վաղ էին հայկական պետության առաջնորդները նկատել էթնալեզվական միատարրության ռազմավարական կարևորությունը: Հենվելով Մար Աբասի մատյանի վրա՝ Խորենացին հաղորդում է, որ Արամ թագավորը (որն այս դրվագում, ամենայն հավանականությամբ, մարմնավորում է մ.թ.ա. 9-րդ

⁵ Մովսէս Խորենացի. Պատմութիւն Հայոց. Գիրք Բ, Գլ. Ը:

դարի հայոց թագավոր Արամեին)⁶ կարգադրել է նոր գրավված ծայրամասային գավառների բնակչությանը՝ «ուսանել զխօսս և զլեզուս հայկական»⁷:

Սակայն, Մովսես Խորենացին հայոց լեզվի նշանակությունը շեշտած մեր միակ ոսկեդարյան հեղինակը չէ: Հայկական գրերի ստեղծումից անմիջապես հետո, 5-րդ դարում, հայ նշանավոր մտածողներից ուրիշներն էլ են անդրադարձել հայոց լեզվին:

Փավստոս Բուզանդը սահմանում էր Հայաստանը որպես «Հայոց լեզվի ամբողջ աշխարհ» (աշխարհ ամենայն Հայոց լեզուին)⁸ և «հայոց լեզվի Թորգոմական աշխարհ» (երկիրն լեզուին Թորգոմական աշխարհին)⁹: Այս սահմանումների ճշգրիտ ընկալումը, սակայն, որոշակի պարզեցում է պահանջում: Առաջարկում ենք իմաստային լրացումով այսպիսի ընթերցում՝ «հայոց լեզվի [տիրապետության ներքո գտնվող] ամբողջ աշխարհ» և «հայոց լեզվի [տիրապետության ներքո գտնվող] Թորգոմական աշխարհ»:

Այսպիսի ընթերցման ստուգությունը հաստատվում է Փավստոսի *Հայոց պատմության* մեկ այլ դրվագով. պատմելով Ներսես Մեծ Կաթողիկոսի մահվան առիթով Հայաստանը պատած համազգային սուգի մասին, Փավստոսը գրում է.

⁶ Արամ թագավորի հավաքական կերպարի մանրամասն քննությունը տե՛ս Արմեն Պետրոսյան, *Արամի առասպելը հնդեվրոպական առասպելաբանության համատեքստում և հայոց ազգածագման խնդիրը* (Երևան, «Վան Արյան», 1997):

⁷ Մովսես Խորենացի. *Պատմություն Հայոց*: Քննական բնագիրը և ներածությունը Մ. Աբեղեանի և Ս. Յարությանի: Լրացումները Ա. Բ. Սարգսեանի (Երևան, ԳԱ, 1991. Տիփիսի 1913 թ. հրատարակության նմանահանություն), էջ 46:

⁸ «Իսկ աշխարհ ամենայն հայոց լեզուին, գաւառաց գաւառաց, կողմանց կողմանց, տեղեաց տեղեաց մեծամեծք աշխարհակալք գաւառատեարք նահապետք մեծագեացք և ամենայն ուխտ քահանայութեան, ժողովք միաբանական ժողովրդոցն, ի սուգ տխրութեան ընկղմեալ էին վասն իւրեանց հօտապետ գլխատրին, զի հեռացաւ ի նոցանէ».- Փաւստոս Բուզանդացի. *Պատմություն Հայոց ի չորս դպրութիւնս (չորրորդ տպագրութիւն)*. Վենետիկ, 1933, Դպրութիւն Դ, Գլ. ԺԲ, էջ 115:

⁹ Փաւստոս Բուզանդացի. *Պատմություն Հայոց ի չորս դպրութիւնս*, Դպրութիւն Գ, Գլ. ԺԳ, էջ 43: Ինչպես մեկ այլ առիթով նշել ենք, «երկիրն լեզուին Թորգոմական աշխարհի» արտահայտության մեջ երկիր և աշխարհ բառերը գործածված են նույն իմաստով՝ իբրև հոմանիշներ կամ, այսպես կոչված, պեսպիսություններ. - տե՛ս Արմեն Այվազյան, *Հայաստանի պատմության լուսաբանումը ամերիկյան պատմագրության մեջ. քննական տեսություն* (Երևան, «Արտագերս», 1998), էջ 200-201: Փավստոսի այս «անառաջնորդ եղեալ՝ իբրև գկոյրս մոլորեցան երկիրն լեզուին Թորգոմական աշխարհին» դրվագը Մալխասյանցն ընթերցել է այսպես՝ «անառաջնորդ մնալով՝ կույրերի նման մոլորվեց հայ լեզվով խոսող Թորգոմական աշխարհը»: Ստորև առաջարկում ենք այլ ընթերցում, որը, մեր համոզմամբ, բնագրին ավելի հարազատ է. «անառաջնորդ մնալով՝ հայոց լեզվի [տիրապետության տակ գտնվող] Թորգոմական աշխարհի բնակիչները կույրերի նման մոլորվեցին»:

Եվ Հայոց երկրի սահմանների ներսում՝ մի ծայրից մյուս ծայրը, սգում էին նրան բոլոր ազնվականներն ու շինականները՝ Թորգոմի տան բնակիչ բոլոր ազնվականներն ու շինականներն անխտիր, հայ լեզուն առհասարակ:

[Եւ սգային ամենայն ազատք և շինականք ծագէ ի ծագ ամենայն սահմանաց երկրին Հայոց, ազատք և շինականք ամենայն բնակիչք տանն Թորգոմայ, հայ լեզուն առհասարակ]¹⁰:

Այս հատվածում Փավստոսը դարձյալ հայ է համարում հայերենով խոսողներին միայն (ընդ որում՝ անկախ դասակարգային կամ որևէ այլ տարբերակումների), Հայաստանը սահմանում է որպես հայոց լեզվով խոսող երկիր և Հայաստանի սահմանները որոշում է հայոց լեզվի տիրապետության տարածքի համեմատ:

Պետք է ասել, որ Ստ. Մալխասյանցը, Փավստոսի *Հայոց պատմություն*ն արդի հայերենի թարգմանելով, հեղինակի՝ Հայաստանին տված վերոբերյալ սահմանումներն անհարկի վերածել է արձակային ձևերի. ահավասիկ՝ «երկիրն լեզուին Թորգոմական աշխարհին»-ը վերաձևվել է «հայ լեզվով խոսող Թորգոմական աշխարհ»-ի, «աշխարհ ամենայն Հայոց լեզուին»-ը՝ «հայերեն խոսող ամբողջ աշխարհ»-ի, «հայ լեզուն առհասարակ»-ը՝ «առհասարակ հայ լեզվով խոսող մարդիկ» խիստ անհարազատ ընթերցմանը¹¹: Արդյունքում՝ կորել են հեղինակային կարևոր ենթաիմաստներն ու նրբերանգները: Մինչդեռ Փավստոսը «Հայոց լեզուին» գիտակցաբար է հաղորդել շնչավոր, կենդանի առարկա-գործոնի նշա-նակություն, նույնացնելով Հայաստան-հայեր-հայոց լեզու հասկացությունները: Սա հատկապես պարզ է արտահայտված վերջին դրվագում՝ «սգում էր հայ լեզուն առհասարակ»¹²:

Փոքր-ինչ առաջ ընկնելով ասենք, որ Հայաստանին Փավստոս Բուզանդի տված հստակ բնորոշումը՝ «հայոց լեզվի [տիրապետության ներքո գտնվող] աշխարհ», ունեցել է Եվրոպայում իր ուշ մամոթիմակները: 19-րդ դարի սկզբին, օրինակ, գերմանացի հեղինակ Էռնստ Մորից Առնհոլտը նույն կերպ

¹⁰ Փավստոս Բուզանդացի. *Պատմություն Հայոց*, Ե, Գլ. Լ, էջ 231:

¹¹ Փավստոս Բուզանդ. *Պատմություն հայոց*: Թարգմ., ներած. և թարգմանություններն Ստ. Մալխասյանցի (Երևան, «Հայաստան», 1968), էջ 43, 158, 267:

¹² Մալխասյանցն ընթերցել է այսպես (նախադասությունը մեջ ենք բերում ամբողջությամբ). «Եվ Հայաստանի բոլոր սահմաններում ծայրեծայր սգում էին նրան ազնվականներն ու շինականները, Թորգոմի տան բոլոր բնակիչները, առհասարակ հայ լեզվով խոսող մարդիկ». - Նույն տեղում, էջ 267:

է սահմանել Գերմանիան՝ որպէս «գերմաներենի [տիրապետության ներքո գտնվող] աշխարհ»՝ *Das ist des Deutschen Vaterland* (բառացիորեն՝ «սա գերմաներենի հայրենիքն է»)՝¹³:

Եղիշեն ևս հայոց լեզվին նվիրած ուշագրաւ մի անդրադարձ ունի: «Վարդանի և հայոց պատերազմի մասին» երկի հեղինակը, իր մէկ այլ՝ «Արարածոց մեկնություն» աշխատության մէջ, ընդգծում է հայոց լեզվի բացառիկ կարողությունները՝ դրանք համեմատելով իր ապրած ժամանակի ինը նշանավոր այլ լեզուների հետ.

Ուստի մի խոշոր լեզվի [տրոհումից] գեղեցկաբանություն առաջացաւ. հույների լեզուն փափուկ է, հռոմեացունը՝ սաստիկ, հոնինը՝ սպառնական, ասորունը՝ աղաչական, պարսկինը՝ պերճ, ալագնինը՝ գեղեցկազարդ, գոթինը՝ ծաղրական, եգիպտացունը՝ կարծես մի ծածուկ և խավար տեղից լսվի, հնդիկինը՝ ճովուացող, իսկ հայինը համեղ է և կարող է բոլոր լեզուները իր մէջ ամփոփել:

Եւ ինչպէս գույնը գույնով է պայծառանում, և դէմքը դէմքով, և հա-սակը հասակով, և արվեստը արվեստով, և գործը գործով, նոյնպէս և լեզուն լեզվով է գեղեցկանում...

[Ուստի գեղեցկաբանութիւն եղև ի մի խոշոր լեզուին. փափուկ՝ հելլենն, սաստիկ՝ հռոմայեցին, սպառնական՝ հոնին, աղաչական՝ ասորին, պերճական՝ պարսիկն, գեղեցկազարդ՝ ալանն, ծաղրական՝ գութն, տափախոս խավարաձայն՝ եգիպտացին, ճնուողական՝ հնդիկն, համեղական՝ հայն, որ կարէ զամենն յինքն ամփոփել:

Եւ որպէս գոյն առ գունով պայծառանայ, և դէմք ի դիմաց, և հասակ առ հասակ, և արուեստ առ արուեստ, և գործ առ գործով, նոյնպէս և լեզու լեզուաւ գեղեցկանայ...]¹⁴

Այս տողերը ցուցադրում են, մի կողմից, այն անթաքույց հպարտությունը, որով Եղիշեն խոսում է հայոց լեզվի մասին, համարելով այն լավագույնը՝ բոլոր մյուս լեզուների բարեմասնություններն իր մէջ ամփոփողը, մյուս կողմից՝ այն հարգալից և նույնիսկ սիրալիր վերաբերմունքը, որ ունի հեղինակը այլազգի լեզվական մշակույթների հանդէպ, թեև արտաքուստ

¹³ St'ua Liah Greenfeld, *Nationalism. Five Roads to Modernity* (Cambridge, Mass.: Harvard University Press, 1992), pp. 368, 549 (n. 179). մեջբերումն արված է հետևյալ գրքից՝ *Deutsche Vaterlandslieder* (Leipzig: Insel-Verlag, 193[?]), Insel-Bucherei 154, p. 28:

¹⁴ Տե՛ս Լևոն Խաչիկյան, *Եղիշեի «Արարածոց մեկնությունը»* (Երևան, «Զվարթնոց», 1992), էջ 249. հմմտ. Լևոն Խաչիկյան, *Աշխատություններ*. Հտ. Ա. (Երևան. «Գանձասար», 1995), էջ 15:

նկատվում է նրա թեթև հումորը, որ կոչված է իր հերթին ընդգծելու հայերենի գերազանցությունը: Օտար մշակույթների հանդեպ այսպիսի հանգիստ կեցվածքը գալիս է ցուցադրելու հինգերորդ դարի հայ ազգայնականության լուսավորչալությունը, հայերի համոզվածությունը, որ սեփական քաղաքակրթությունն ու մշակույթը բավականաչափ հզոր են՝ օտար ազդեցություններին դիմագրավելու կամ դրանց օգտակար տարրերը յուրացնելու համար: Այլ կերպ ասած՝ Եղիշեի ժամանակներում հայերն իրենց մշակութային բավական ապահով և անվտանգ են զգացել:

Ինչպես տեսնում ենք, 5-րդ դարում հայ մտավոր ընտրանին լրջորեն քննել և գնահատել է հայոց լեզվի մշակութային և քաղաքական-ոազմավարական նշանակությունը: Ընդ որում՝ Հայաստանում ազգային լեզվի արժեքի մասին քննարկումները ծայր էին առել դեռևս մինչև գրերի գյուտը, որ եղավ այդ քննարկումների մեծագույն արդյունքը: Փալստոս Բուզանդի, Մովսես Խորենացու և Եղիշեի վերոբերյալ դատողությունները փաստում են ոչ միայն հայերի ազգային ինքնագիտակցության հստակությունը (որը, սակայն, նրանցից շատ ավելի վաղ ժամանակներում էր ձեռք բերվել), այլև՝ 5-րդ դարում հայ ազգային-քաղաքական մտքի գաղափարականացումը, ասել է թե՛ տեսաբանական բարձր մակարդակի հաս-նելը:

Այլ լեզուների նկատմամբ հայոց լեզվի ունեցած համեմատական գերազանցությունն ընդգծել են հետագա հայ հեղինակները ևս:

Վարդան Արևելցի (մոտ 1200-1271)

13-րդ դարի հայ մեծ մատենագիր Վարդան Արևելցին գրել է իր՝ «Մեկնութիւն քերականի» երկը 1244-1246 թթ.՝ Կիլիկյան Հայաստանի թագավոր Հեթում Ա-ի համար և նրա խնդրանքով (այս հանգամանքը ընդգծված է երկի վերնագրում՝ «ի խնդրոյ թագաւորին Հայոց Հեթմոյ»)¹⁵: Արևելցին ևս, Եղիշեի նման, համեմատության մեջ դնելով հայերենը այլ լեզուների հետ, եկել է այն համոզման, որ իր մայրենին լավագույնն է: Ահավասիկ.

Բայց դու, [ով հայ] ազգ, սեռը հետազոտիր և լեզուները քննիր. օրինակ՝ հույները, ֆոնականները (իմա՝ լատիններենով գրող եվրոպացիները, Ա. Ա.) և հելլենացիները, որ մակեդոնացիներն են,

¹⁵ Վարդան Արևելցի. *Մեկնութիւն քերականի*: Աշխատասիրությամբ՝ Լ. Գ. Խաչերյանի: Երևան, ԳԱ հրատ., 1972, էջ 6, 73. հմմտ. Փ. Փ. Անթապյան. *Վարդան Արևելցի. կյանքն ու գործունեությունը*: Գիրք Ա (Երևան, ԳԱ հրատ., 1987), էջ 149:

շատ են չարչարվում, մինչև որ հասնում են իրենց ուզածին և կարողանում են ընտրությամբ խոսել և լսել բառերը, թե ո՞րն է արականը, իգականը և կամ չեզոքը, ո՞րը՝ երկսեռը:

Բայց ազգս հայոց, լեզվիս և գրիս հարստության և փարթամության շնորհիվ, անհարկի համարեց այս, իսկ հույները և այլ ազգերը հարկադրվեցին՝ իրենց լեզվի և գրի սակավության պատճառով և դրանով լցրին [իրենց լեզուների] պակասությունը:

[Բայց դու ազգ խոյզ արա և քննէ ի խաւսսն, որպէս յոյնք և ֆռանգք, և հելլենացիք, որ են մակեդոնացիք, զի մեծապէս աշխատին, մինչ որ հասանեն իւրեանց ջանիցն և կարեն ընտրութեամբ խաւսել և լսել զբառսն, թէ ո՛ր է՝ արո՞ւ է, էգ, և կամ թէ չեզոք է, թէ երկուորական:

Բայց ազգս հայոց յաղագս հարստության և փարթամության լեզուիս և գրիս ոչ հարկեցան ի յայս, այլ յոյնք և այլ ազգք հարկադրեցան վասն լեզուացն և գրոյն սակաւութեանն, և այնու լցին զպակասութիւնն]¹⁶:

Ահա վարդան Արևելցու նույն միտքը արտահայտող ևս երեք դիտողություն (սրանք արդի հայերենի չենք վերածում՝ տեղի սղության և մեզ հետաքրքրող գաղափարախոսական իմաստի պարզության պատճառով)։

Իսկ բազմութիւն հայկական գրոյս երկու պատճառս ունի. առաջինն՝ զազգացն զկորճայսն է, այսինքն՝ զբազմութիւն հայոց լեզուիս, զծոռութիւնն և զթոթովախաւսութիւնն գնչատացն (գուցե պետք է լինի «հնչատա՞ցն»՝ Ա. Ա.): Երկրորդ պատճառն՝ լեզուիս հարստութիւնն¹⁷:

...Յունացն բացարձակ մէկ գիր է՝ ա, որ զարականն նշանակեն. իսկ մեք չառնենք փոյթ. և դիւրին է մեզ ասել զնոյնն՝ ո՛վ Տրդատիոս,

¹⁶ Վարդան Արևելցի. *Մեկնութիւն քերականի*: Աշխատասիրությամբ՝ Լ. Գ. Խաչերյանի: Երևան, ԳԱ հրատ., 1972, էջ 93: Անդրադառնալով այս հատվածին՝ Փ. Անթապյանը դիպուկ նկատողություններ է արել. «Վարդան Արևելցին հայերենի «հարստությանը և փարթամությանն» է վերագրում հայերեն բառերի սեռային հատկանիշներից կամ վերջավորություններից ազատ լինելը. դա ճիշտ և գիտականորեն արժեքավոր կարծիք է. նման տեսակետ լեզվաբանության տեսության մեջ հիմնավորվել է 19-րդ դարից ոչ շուտ... Այստեղ ի հայտ է գալիս հիշյալ լեզուների նրա իմացությունը: Ընդգծելով հայերենի «փարթամությունը», նա շոյում է նաև իր ու իր ընթերցող ազգակիցների մայրենի լեզվի նկատմամբ ունեցած զգացումները». - Փ. Փ. Անթապյան. *Վարդան Արևելցի. կյանքն ու գործունեությունը*: Գիրք Բ (Երևան, ԳԱ հրատ., 1989), էջ 125:

¹⁷ Վարդան Արևելցի. *Մեկնութիւն քերականի*, էջ 84:

ն'վ Սմբատ: Երբ միաւոր է՝ ունի միապետական է, երբ ոք է՝ ստորադասական է. զի ոք երկու գիր է, և մէկն ստորեւ է դասեալ և իգական կարենք ասել՝ ո՛ւ Մանի, ո՛ւ Նունի, զի ու ասելն փաղաքշական է, և մանկական է՝ տղայական: Այլ մեք զյաւդն առաւել յաւարտն ունիմք քան ի սկիզբն, որպէս՝ երկնային, երկրային, ծովային, ցամաքային, -- այսպիսիքս հոլովական յաւդ են, և այս առատութենէ լեզուիս է, զի չկարատեանմք բռնադատել ի միապետականն և յառաջն դնել զյաւդն, այլ միշտ և յաճախ ի վճարն¹⁸:

...Ասացաւ, թէ հայք չունին զմիապետականն յաճախ յաւդ՝ որպէս յոյնք և իսմայելացիք [իմա՝ արաբները]. և չէ՛ պակասութիւն, զի ոք չգիտէ ասել երկոտասան՝ ի՞նչ պակաս է ի յասելն տասններկու¹⁹:

Արդարեւ, վարդան Արևելցու լեզվաբանությունը կարելի է իրավամբ բնորոշել իբրև էթնակենտրոն (ethnocentric) կամ, ավելի ստույգ, «հայակենտրոն»: Բազում ընդօրինակություններ ունեցած այս աշխատության հայրենասիրական-ազգայնական գաղափարախոսական ուղղվածությունն անշուշտ լուրջ ազդեցություն գործած պետք է լիներ և՛ հայ վերնախավերի, և՛ առհասարակ հայ գրագետ զանգվածների վրա. չէ՞ որ այս երկը, մերօրյա եզրով ասած, պետպատվեր էր՝ մախատեսված հայոց արքունիքում իբրև դասագիրք օգտագործելու համար, բացի այդ էլ՝ այն լայնորեն կիրառվել է Կիլիկյան և բուն Հայաստանի դպրոցներում ու համալսարաններում²⁰:

Իրականում, վարդան Արևելցին միայնակ և ինքնուրույնաբար չի հանգել հայակենտրոն լեզվաբանության մոտեցումներին, այլ ընդամենը հենվել և զարգացրել է հայկական ազգային գաղափարախոսության դարավոր ավանդույթները: Այդ է վկայում խիստ ուշագրավ մի փաստ: 1267-1268 թթ. ավարտած իր «Տիեզերական պատմութեան» մեջ, վարդանը կրկնել և փոքր-ինչ վերաշարադրել է Եղիշեի «Արարածոց մեկնության»՝ հայոց լեզվին վերաբերող հատվածը: Ահա.

Փափկագոյնն Ելլենացոց, և սաստկագինն Հոովմայեցոց, Հոնն սպառնական, և Ասորին աղաչական, Պարսիկն պերճական, և

¹⁸ Նույն տեղում, էջ 132:

¹⁹ Նույն տեղում, էջ 133:

²⁰ Տե՛ս վարդան Արևելցի. *Մեկնութիւն քերականի*, էջ 6, 168, 170:

Ալանն գեղեցկաձև, Գորն ծաղրական, Եգիպտացին խարափաձայն,
և Հնդիկն ճճուող, Հայն՝ համեղ և ամենազարդ և համեմական²¹:

Գրիգոր Տաթևացի (1346-1409)

Եղիշեի գնահատականը՝ շուրջ մեկ հազարամյակ անց վերաշարադրել ու
մեկնաբանել է նաև Հայ Եկեղեցու և նրա դավանանքի ջատագով, հայ
միջնադարյան ազգայնականության խոշոր տեսաբան Գրիգոր Տաթևացին:
Լ. Խաչիկյանը ի ցույց է դրել մի շարք հատվածներ, որոնք Տաթևացին (ըստ
Խաչիկյանի՝ հիմնականում Վարդան Արևելցու միջնորդությամբ) վերցրել է
Եղիշեի «Արարածոց մեկնութիւն»-ից: Խաչիկյանը միաժամանակ նշել է, որ
իր համեմատած «օրինակների թիվը կարելի է անչափ շատացնել»²²:
Լրացնենք Խաչիկյանի բերած համեմատումների շարքը մի ակնհայտ
օրինակով ևս:

1397 թ. ավարտած «Գիրք հարցմանց» իր աշխատության մեջ Գրիգոր
Տաթևացին ունի լեզվի հարցերին նվիրված երեք գլուխ²³, որտեղ նա,
իմիջիպալոց, կրկնում և փոքր-ինչ խմբագրում ու մեկնաբանում է Եղիշեին.

Հույների լեզուն փափուկ է, հոռմեացունը՝ սաստիկ, հոնհինը՝
սպառնական, հնդիկինը՝ ճովոացող, պարսկինը՝ պերճ, իսկ հայինը
համեղ է և [հայը] կարող է բոլոր լեզուները ճշգրիտ յուրացնել: Իսկ
ուրիշները հայոց լեզուն աղճատված և սխալ են ուսանում, քանի որ
թերի է նրանց լեզուն:

[Զի փափուկ է հելլենացին և սաստիկ հոսմայեցին, սպառնական
հոնհին և ճըճուող հնդիկն, պերճական պարսիկն և համեղ հայոյն, որ
բոլորապես կարող է զամենայն լեզու ուղղակի ուսանիլ: Եւ այլք
զհայոյն՝ ծեքական և թիւր ուսանին, զի մասնաւոր է լեզու նոցա]²⁴:

²¹ Վարդան Արևելցի. Հաւաքումն պատմութեան Վարդանայ վարդապետի, (Աշխատասի-
րությամբ Ղ. Ալիշանի), Վենետիկ-Ս. Ղազար, 1862, էջ 12. հմմտ. Մեծին Վարդանայ
Բարձրբերդեցոյ Պատմութեան տիեզերական. ի լոյս ընծայեաց Մկրտիչ Էմին, Մոսկվա, 1861, էջ
19:

²² Լևոն Խաչիկյան, Եղիշեի «Արարածոց մեկնութիւնը», էջ 211-213. հմմտ. Փ. Անթապյան.
Վարդան Արևելցի. Գիրք Ա, էջ 287:

²³ Գրիգոր Տաթևացի. Գիրք հարցմանց. Կոստանդնուպոլիս, 1729, էջ 297-299:

²⁴ Նույն տեղում, էջ 297: «Մասնաւոր է լեզու նոցա» հատվածը թարգմանել ենք «թերի է
նրանց լեզուն», որովհետև «մասնավոր» այս դեպքում ակնհայտորեն հակադրված է «կատարյալին»
(կատարյալ է համարված հայոց լեզուն). օրինակ, համեմատիր Վարդան Արևելցու հետևեալ
հատվածների հետ. «զի կատարեալ գիտութիւնն Աստուծոյ միայն է. մարդկանս մասնավոր միայն է

Արդ, այս հատվածում, թեև վերախմբագրված վիճակում, պահպանվել է Եղիշեի մի միտքը, որը Վարդանի «Տիեզերական պատմութեան» միջից դուրս է մնացել, այն է՝ որ հայոց լեզուն ու հայը «կարող է բոլոր լեզուները իր մեջ ամփոփել» («կարէ զամենն յինքն ամփոփել», Տաթևացու խմբագրությամբ՝ «բոլորապէս կարող է զամենայն լեզու ուղղակի ուսանիլ»): Հետևաբար, Տաթևացին ձեռքի տակ է ունեցել Եղիշեի «Արարածոց մեկնության» բնագիրը և այս հատվածը անկասկած քաղել է ուղղակիորեն Եղիշեից, առանց որևէ միջնորդության:

Տաթևացին մեկնաբանել է նաև Եղիշեի խոսքի շարունակությունը.

Դարձեալ՝ խառնակիլ լեզուին այն է, որ ընդ պատուհասն զբարութիւն խառնեաց, զի թէպէտ բաժանումն լեզուաց պատուհաս երևի, այլ պիտանի է: Նախ, ի գեղեցկութիւն լեզուին. զի որպէս գոյն առ գունով պայծառանայ, և արուեստ առ արուեստ, նոյնպէս՝ լեզու առ լեզու գեղեցկանայ ի խօսքն²⁵:

Քիչ անց Տաթևացին դարձյալ կրկնում է Եղիշեին (սակայն «գութն» խմբագրում է «մունդն»-ի, «գեղեցկազարդ ականն»-ը՝ «գեղազանդ աղուանն»-ի և այլն).

*Իսկ գեղեցկախօսութիւն լեզուաց.
փափուկ հելլենն,
սաստիկ հռոմայեցին,
սպառնական հոնին,
աղաչական ասորին,
պերճական պարսիկն,
գեղազանդ աղուանն,
ծաղրական մունդն,
խափարաձայն եգիպտացին,
ճըճուողական հնդիկն,
համեղական հայրն, որ կարող է զամենայն լեզու յինքն
ամփոփել և բոլոր խօսիլ, և այլքն ո՛չ՝ որպէս ասացաւ ի վերոյ²⁶:*

գիտութիւն» կամ «զի Աստուծոյ գիտութիւնն միայն է ընդհանուր, իսկ մարդկային գիտելս ամենայն մասնաւոր է» (Վարդան Արևելցի. *Մեկնութիւն քերականի*, էջ 73-74, 76):

²⁵ Նույն տեղում:

²⁶ Նույն տեղում, էջ 299:

Հայ մատենագրության մեջ Եղիշեի վերոհիշյալ դրույթների անխաթար պահպանումն ու վերարտադրությունը 5-ից մինչև 15-րդ դար՝ հայ մտքի բացառիկ շարունակականության ընդամենը մի առանձին, սակայն ցցուն օրինակ է: Այս կապակցությամբ հարկ է մի փոքր շեղվել մեր բուն ուսումնասիրությունից:

Հայ մտքի ժառանգորդությունը և հայկական քաղաքակրթությունը

Անգլիացի աշխարհահռչակ փիլիսոփա Ռոբին Քոլինգվուդի հաջող բնորոշմամբ քաղաքակրթությունը ոչ այլ ինչ է, քան հասարակության մտքի տևական ինքնաշարունակ զարգացում. «Քաղաքակրթությունը այն գործընթացն է, որն անցյալի միտքը վերածում և կապակցում է ներկա իրականությանը: Ըստ էության, ողջ արդիական միտքը անցյալի մտքի ինքնաբերական շարունակությունն է և քննադատությունը»²⁷:

Հետևելով քաղաքակրթություն հասկացության Քոլինգվուդի հաջող ձևակերպմանը՝ կարելի է վստահ եզրակացնել, հայկական ինքնօրինակ քաղաքակրթության ծանրակշիռ վկայություններից մեկը հայ մտքի անառարկելի ժառանգորդությունն է: Որքանով որ հայ միտքը միշտ եղել է նախորդ հայ մտքի անընդհատ, ուղղակի և անուղղակի շարունակությունը, ճիշտ այնքանով էլ հայ ազգը եզակի քաղաքակրթության դասական կրող է:

Հին, միջնադարյան և ուշմիջնադարյան հայ այլ հեղինակները ևս ունեն հայոց լեզվին վերաբերող նույնաբովանդակ նյութեր, սակայն մի հոդվածի սահմաններում դրանց բոլորին անդրադառնալն անիմաստ է և անհնար²⁸:

²⁷ "Civilization is the process of becoming, linking the thought of the past to the present. Thus all present thought implicitly continues and criticizes the thought of the past." - David Miller, ed., *The Blackwell Encyclopaedia of Political Thought* (Oxford-Cambridge: Blackwell Publishers, 1995), p. 85. Թերևս, նույն միտքն է (ընդ որում՝ ավելի պարզ ձևակերպումով) արտահայտել հայաստանցի նշանավոր փիլիսոփա Համլետ Գևորգյանը, միայն թե Քոլինգվուդի օգտագործած քաղաքակրթության փոխարեն կիրառելով մշակույթ եզրը. «Механизм наследования культуры - это механизм преемственности: функционирования культурной традиции, воссоздания и обновления культурой самой себя. ...Культура создается через созидание культуры: в этой, с виду тавтологической, формуле содержится истина». -- Г. А. Геворкян. Национальная культура с точки зрения философии истории. (Ереван, Изд. АН Армении, 1992), с. 24, 25.

²⁸ Կորյունի Վարք Մաշտոցին երկը, փաստորեն, ամբողջովին հայոց գիր և գրականության փառաբանումն է, որն առաջին իսկ նախադասությամբ հռչակում է հայոց գրերը «Աստուածապարզ»՝ «ԶԱզքանագեան Ազգին և զՀայաստան աշխարհին զԱստուածապարզ և գրոյն...».- Կորիւն, Վարք Մաշտոցի. Աշխ. Մ. Արեւյանի, Երևան, 1941, էջ 22 (հմմտ. էջ 42, 48): Իսկ Չամչեանն, օրինակ, մի ամբողջ մեծ գլուխ է շարադրել հետևյալ վերնագրով՝ «Ի վերայ լեզուին

* * *

Ե՞րբ է ազգային լեզվի նկատմամբ նույն կամ նմանատիպ վերաբերմունք ձևավորվել Եվրոպայում: Այս մասին ուշագրավ նյութեր է պարունակում սոցիոլոգ-պատմաբան Լիա Գրինֆելդի վերջերս լույս տեսած ուշագրավ աշխատությունը, որ նվիրված է անգլիացիների, ֆրանսիացիների, ռուսների, գերմանացիների և ամերիկացիների՝ որպես ազգ ձևավորվելու ընթացքի քննությանը: Գրինֆելդը մասնավորապես նկատել է, որ սեփական լեզուների նկատմամբ հատուկ այս վերաբերմունքը առաջացել է ազգերի ձևավորմանը և նրանց մեջ հայրենասիրական և ազգայնական տրամադրությունների զարգացմանը զուգընթաց²⁹:

Անգլերենը

Այսպես. անգլիացիներն իրենց նվիրվածությունն ու սերը անգլերենի հանդեպ արտահայտում են սկսած 16-րդ դարից: Լ. Գրինֆելդը ցույց է տալիս, որ անգլիացի մտավորականների մեծամասնությունն անգլերենը համարում էր բոլոր մյուս լեզուներից շատ ավելի վեր կանգնած: Այդ վերաբերմունքի լավագույն արտահայտությունը Ռիչարդ Քարյուի՝ 1595-1596 թթ. գրած ստեղծագործությունն է, որ կոչվում է «Նամակ անգլերեն լեզվի գերազանցության մասին» (Epistle on the Excellency of the English Tongue): Քարյուն թվարկում է մի շարք առավելություններ, որ, իր մեկնությամբ, ունի անգլերենը և չունեն մյուս լեզուները: Անչափ հետաքրքիր է դիտել Քարյուի մտքի զուգահեռները Եղիշեի վերը մեջբերված գնահատականների հետ: Ահավասիկ.

Իտալերենը հաճելի է, բայց անմկան է, ինչպես խաղաղ հոսող ջուրը: Ֆրանսերենը՝ նրբագեղ է, սակայն չափից դուրս ձևական, ինչպես կինը, որ երկնչում է շուրթերը բացել՝ վախենալով վնասել իր դեմքը: Իսպաներենը ազնվական է, սակայն չափազանց կեղծ, չափից շատ է «Օ» գործածում, ու նաև սարսափազդու է, ինչպես

Հայոց, թե իցե առաջին».- Մ. Չամչեանց. Պատմություն Հայոց: Հտ. Ա, (Վենետիկ, 1784), էջ 153-164:

²⁹ Հմմտ., օրինակ, Liah Greenfeld, *Nationalism, op.cit.*, pp. 69-70, 78 (անգլերենի վերաբերյալ), 97-99 (ֆրանսերենի վերաբերյալ), 243-245, 247 (ռուսերենի վերաբերյալ), 368-369 (գերմաներենի վերաբերյալ):

սատանան թատրոնի ներկայացման մեջ: Հոլանդերենը* տղամարդկային է, սակայն շատ խոպոտ, ինչպես մեկը, որ պատրաստ է ուզածդ բանից վեճի բռնվել: Իսկ մենք, փոխառելով սրանցից, իտալերենից ստացել ենք բաղաձայնների ուժը, ֆրանսերենից՝ բաների ամբողջական հնչյունավորումը, իսպաներենից՝ վերջավորությունների զանազանությունը, հոլանդերենից՝ լրացուցիչ փափկացնող ձայնավորները: Այսպիսով (ինչպես մեղուները) հավաքել ենք մեղրը նրանց լավ ունեցածվածքից, իսկ նրանց մրուրն՝ իրենց ենք թողել: ...ինչպես կարող է մի լեզու, որ ունի այս բոլորը, չհնչե՞լ այլ կերպ, քան քաղցրահամությամբ լի:

[The Italian is pleasante but without synewes, as to stillye fleeting water; the French delicate but ouer nice, as a woman scarce daring to open her lipps for feare of marring her countenaunce; the Spanish maiesticall, but fulesome, running too much on the O, and terrible like the deuill in a playe; the Dutch manlike, but withall very hoarse, as one ready at every worde to picke a quarell. Now wee in borrowing from them geue the strength of Consonantes to the Italian, the full sounde of wordes to the French, the varietye of terminacions to the Spanish, and the mollifieinge of more vowells to the Dutch; and soe (like bees) gather the honey of their good properties and leave the dreggs to themselves. ...howe canne the languadge which consisteth of all these sounde other then most full of sweetnes?]³⁰

Ֆրանսերենը

Ֆրանսիայում նույնատիպ վերաբերմունքը ֆրանսերենի նկատմամբ ձևավորվել էր է՛լ ավելի վաղ, թեև, ինչպես նկատում է Գրինֆելդը, ֆրանսերենն ամբողջ Ֆրանսիայի լեզուն չէր, այլ միայն Փարիզինը. նրանով ոչ միայն չէին խոսում, այլև՝ ընդհուպ մինչև 15-րդ դար չէին գրում Ֆրանսիական թագավորության մյուս նահանգներում: 11-րդ դարում Ֆրանսիայում խոսակցական լեզվով ստեղծված գրականությունն անգլո-նորմանդերենն էր, իսկ 13-14-րդ դարերում, նայած թե ո՞ր նահանգից էր հեղինակը՝ պիկարդերենը, շամպայներենը և բուրգունդերենը, որոնցից յուրա-

* Հավատարապես հնարավոր է, որ այստեղ Քարյուն նկատի ունի ոչ թե հոլանդերենը, այլ գերմաներենը, քանի որ հին անգլերենում the Dutch նշանակել է նաև գերմաներեն: Գրինֆելդն այս հարցին չի անդրադարձել:

³⁰ Liah Greenfeld, *Nationalism, op. cit.*, pp. 69-70, 78.

քանչյուրը բաժանված էր բարբառների: Սակայն 12-րդ դարից ի վեր ֆրանսերենը դարձել էր Եվրոպայի վերնախավերի լեզուն: 1148 թ. վերաբերող մի վկայության համաձայն, դեռ այդ ժամանակներում ֆրանսերեն չիմացող որևէ մարդ բարբարոս էր համարվում³¹: 13-րդ դարի հեղինակներն արդեն բնութագրում են փարիզյան ֆրանսերենը որպես «աշխարհի ամենագեղեցիկ լեզու», «ամենաքաղցրը», «սկանչի և լսողության համար ամենադուրեկանը» (la plus delitable a ouir et a entendre):

Ահա այդպիսի մի գովաբանում.

Ֆրանսերեն քաղցր լեզուն աշխարհում ամենագեղեցիկն է, ամենանրբագեղն ու ազնվականը, ամենաընդունվածն ու սիրվածը, քանի որ Աստված այն, հանուն իր փառքի և գովքի, դարձրել է այնչափ քաղցրահամ և սիրելի, որ այն կարելի է համեմատել երկնքում հրեշտակների խոսած լեզվին³²:

Միայն սկսած 14-րդ դարից ֆրանսերենն աստիճանաբար դառնում է գիտնականների և գրողների (այս, ինչպես տեղին նկատում է Գրինֆելդը, կոլեկտիվ ինքնության խորհրդանիշեր ստեղծողների) կրքոտ սիրո առարկա և այդ ճանապարհով էլ՝ ֆրանսիացու ինքնության կենտրոնական խորհրդանիշը³³:

Հետաքրքիր է նաև, որ, ի տարբերություն անգլիացիների, գերմանացի և ֆրանսիացի ազգայնականներն իրենց լեզվի առավելությունը ոչ թե ուրիշ լեզուներից կատարված փոխառություններն էին համարում, այլ օտար լեզվական ազդեցություններից իրենց լեզուների իբր գերծ մնալը (սակայն ֆրանսիացիներն արհամարհանքով նկատում էին, թե որքան լի է փոխառություններով գերմաներենը)³⁴:

Ռուսաց լեզու

Հայկական սովետական հանրագիտարանի համաձայն, ռուսերենն «իր հնչյունական, բառային, քերականական, ոճական ամբողջական համակար-

³¹ Նույն տեղում, էջ 98:

³² Նույն տեղում: Գրինֆելդը տրամադրել է այս մեջբերման անգլերեն թարգմանությունը միայն. "The sweet French tongue is the most beautiful, gracious and noble language in the world, the best accepted and loved. For God made it so sweet and lovable for his glory and praise, that it can be compared to the language spoken by the angels in heaven."

³³ Նույն տեղում, էջ 98-99:

³⁴ Liah Greenfeld, *Nationalism, op. cit.*, pp. 98, 368.

գումն ու նորմավորումը ձեռք է բերել 19-րդ դարի 1-ին տասնամյակներին, հատկապես Ա. Ս. Պուշկինի ստեղծագործությունների շնորհիվ»³⁵: Հարկ է ավելացնել, որ այս փայլուն արդյունքին նախորդել էին ուս պետական գործիչների և ազգայնական մտավորականների շուրջ մեկդարյա ջանքերը³⁶: Այսպես՝ 18-րդ դարի սկզբի դրությամբ, կողք-կողքի գոյատևում էին եկեղեցական-սլավոնական լեզուն, որին միայն քչերն էին քաջագիտակ, և խոսակցական ուսերենը: Ռուսերենի զարգացածության մակարդակն այնքան անբավարար էր պետական ուժնացած մեքենայի խնդիրները լուծելու համար, որ 1700 թ., մի պահ, Պետրոս Ա նույնիսկ Ռուսաստանի պաշտոնական լեզու էր ցանկանում հռչակել հոլանդերենը³⁷: Սակայն, հետ կանգնելով այդ մտքից, նույն՝ 1700 թ. Պետրոսը ձեռնարկեց լեզվական կարևոր բարեփոխումների և ուսերենի հետագա զարգացումը դրեց պետական հիմքերի վրա: Ռուսաց լեզվի ջատագով մտավորականների թվում նախ և առաջ պետք է հիշատակել Միխայիլ Լոմոնոսովին, որը 1755 թ. սեպտեմբերի 20-ով թվագրված մի գրության մեջ ահա այսպիսի դատողություններ է անում.

...ռուսաց լեզուն Եվրոպայում բոլորից (իմա՝ մյուս բոլոր լեզուներից, Ա. Ա.) մեծ է. և ո՛չ միայն այն վայրերի մեծությամբ, որտեղ նա իշխում է, այլև հե՛նց իր սեփական ընդգրկունությամբ և բավարար լինելով...

Հոռմեական կայսր Կարլոս Հինգերորդն ասում էր, թե իսպաներենով վայել է խոսել Աստծու, ֆրանսերենով՝ բարեկամների, գերմաներենով՝ թշնամիների, իտալերենով՝ իգական սեռի հետ: Սակայն եթե նա տիրապետեր ուսերեն լեզվին, ապա, իհարկե, ասվածին կավելացներ, որ ուսերենով բոլորի հետ էլ խոսելը վայել է, քանի որ ուսերենում նա կգտներ իսպաներենի հոյակապությունը, ֆրանսերենի կայտառությունը, գերմաներենի կարծրությունը, իտալերենի նրբությունը և, ավելին՝ հունարենի և լատիներենի հարստությունն ու պատկերելու մեջ համառոտության ուժը:

³⁵ Հայկական սովետական հանրագիտարան, հտ. 10, Երևան, 1984, էջ 90-91:

³⁶ Նույն տեղում, էջ 243-245, 247:

³⁷ Նույն տեղում, էջ 243: Մի հետաքրքրական փաստ. բժշկագիտության առաջին ուս պրոֆեսոր Կ. Ի. Շչեպինը, նախաձեռնելով ուսերենով դասավանդել իր առարկան, խոստովանում էր, որ «ավելի հեշտ է տալը դասախոսություն կարդալ լատիներեն, քան մեկ հատ ուսերեն».- տե՛ս Liah Greenfeld, *Nationalism, op. cit.*, p. 245:

[...язык российский, не токмо обширностию мест, где он господствует, но купно и собственным своим пространством и довольствием велик перед всеми в Европе....

Карл Пятый, римский император, говаривал, что ишпанским языком с богом, французским - с друзьями, немецким с неприятельми, итальянским - с женским полом говорить прилично. Но если бы он российскому языку был искусен, то, конечно, к тому присовокупил бы, что им со всеми оными говорить пристойно, ибо нашел бы в нем великолепие ишпанского, живость французского, крепость немецкого, нежность итальянского, сверх того, богатство и сильную в изображениях краткость греческого и латинского языка.]³⁸

Անգլիացի հեղինակներ Հանս Ռոջերը և Լիա Գրինֆելդը միահամուռ զարմանքով նկատել են, որ ոուսերենին հասցեագրված այս ձոնը բացահայտ նմանություն ունի Քարյուի՝ անգլերենին նվիրած վերոհիշյալ դիֆերամբի հետ: Գրինֆելդը նաև իրավամբ համոզմունք է հայտնել, որ Լոմոնոսովը չէր կարող կարդացած լինել 16-րդ դարի անգլիացի երկրորդական մի հեղինակի երկը և այնտեղից քաղած լինել իր միտքը³⁹:

Մեր կողմից էլ ավելացնենք, որ ո՛չ Գրինֆելդը, ո՛չ էլ Լոմոնոսովը բնավ չէին կարող ծանոթ լինել նրանցից շատ ավելի վաղ՝ 5-րդ դարում հայերենի մասին Եղիշեի արած նույնատիպ դատողություններին, և ո՛չ էլ այդ դատողությունների՝ Վարդան Արևելցու և Գրիգոր Տաթևացու վերաշառադրություններին:

Արդ, կարելի է վստահորեն եզրակացնել, որ այս երեք հեղինակները պարզապես կրել են պատմական-սոցիալական նույնամասն իրավիճակների նույնական ազդեցությունը, և, անկախ իրենց միջև ժամանակային-տարածական մեծ հեռավորության գոյությունից, զարմանալի նույնականությամբ էլ արտահայտել են այդ ազդեցությունը: Բանն այն է, որ իրենց ազգային լեզվի գերազանցության մասին Եղիշեին, Քարյուին և Լոմոնոսովին մղել են խոսել ոչ այնքան նրանց մայրենի լեզուների բարեմասնությունները, որքան ազգային ինքնագիտակցության հաստատման կամ վերա-

³⁸ М. В. Ломоносов, Избранные произведения. Том 2. История, филология, поэзия (Москва: "Наука", 1986), с. 195:

³⁹ Liah Greenfeld, *Nationalism, op. cit.*, p. 533, note 105. cf. Hans Rogger, *National Consciousness in Eighteenth-Century Russia* (Cambridge, Mass.: Harvard University Press, 1960), p. 103:

հաստատման պատմական ժամանակներն ու իրավիճակը: Իսկ տրամաբանության հայտնի օրենքների համաձայն, որևէ բանի գերազանցությունը կամ առավելությունը կարելի է ցուցադրել՝ այն նմանատիպ այլ բաների (այս դեպքում՝ այլ լեզուների) հետ համեմատության մեջ դնելով միայն: Սա էլ հենց արել են Եղիշեն՝ 450-460-ական թթ., Վարդան Արևելցին՝ 1242-44 թթ., Գրիգոր Տաթևացին՝ 1397 թ. Հայաստանում, Քարյուն՝ 1595-96 թթ. Անգլիայում, և Լոմոնոսովը՝ 1755 թ. Ռուսաստանում:

Հայրենասիրական-ազգայնական ճիշտ այս մտայնությունն ու գաղափարախոսությունն էին մղել Եղիշեին անելու նմանօրինակ (թեև այս անգամ հայոց լեզվին չվերաբերող) մի այլ հետաքրքրական համեմատություն.

Երկու գետով և [Նոյյան] տապանով շատ ավելի բարձր ենք, քան մյուս բոլոր [ազգերը]:

*[Երկու գետով և տապանաւն գեր ի վերոյ ենք, քան զյոլովս]*⁴⁰:

Բոլորովին պատահական չէ այն, որ Քարյուն անգլերեն լեզվի գերազանցության մասին իր «Նամակը» երկնել է Եղիսաբեթ թագուհու (1558-1603) գահակալման ամենափառավոր տարիներին, երբ 1588 թ. իսպանական «Անհաղթ արմադայի» ջախջախումով Անգլիան արդեն հաստատել էր իր գերիշխանությունը ծովերի վրա: Նմանապես, Մ. Լոմոնոսովը գովաբանել է ուսերենը Ռուսաստանի աննախադեպ հզորացման շրջանում՝ 18-րդ դարի երկրորդ կեսին: Եղիշեի և վերը նշված մյուս հայ հեղինակների պարագայում խնդիրը փոքր-ինչ տարբեր էր. Հայաստանի պետական հզորության գագաթնակետը մնացել էր անցյալում, սակայն հայ ազգը՝ որպես դարեր առաջ ձևավորված առանձին կենսունակ քաղաքակրթություն, ամենևին չէր հաշտվել լիիրավ անկախության կորստի հետ, այլ շարունակում էր պայքարել և ուղիներ որոնել կատարելապես ազատագրվելու կամ, գոնե առժամանակ, ազգային ուրույն ինքնությունը պահպանելու-ամրապնդելու համար:

Ի մի բերենք: Ազգային լեզուն դառնում է համազգային գիտակցված սիրո և պաշտամունքի առարկա այն ժամանակաշրջաններում, երբ մշակութային զարգացածության որոշակիորեն բարձր աստիճանի հասած էթնիկ խումբը ձեռք է բերում ազգի կայուն հատկանիշեր, այնուհետև, ի դեմս իր մտավորական ընտրանու՝ քաղաքական ընտրանու աջակցությամբ և հովանավորությամբ, ազգային ինքնագիտակցության հետագա հղկումն ու

⁴⁰ Լևոն Խաչիկյան, Եղիշեի «Արարածոց մեկնությունը», էջ 245:

կանոնակարգումը նպատակ ունենալով, սկսում է մանրագնին վերլուծել իր ինքնության տարրերը (այդ թվում՝ ազգային լեզուն)՝ ընդամին տալով դրանց անհրաժեշտությունն ու օգտակարությունը հիմնավորող տեսաբանական-գաղափարախոսական բացատրություններ:

